

Նոցայ կրօնամոլութիւնը կը զայրացնենք, եւ կը միաբանին մեզի դէմ իրենց կատաղութիւնն ի գործ գնելու:

— Ես միշտ այն խորհուրդն եմ տուեր, որ այս անօրէն ազգին հետ խոհեմութեամբ վարուինք, առանց գրգռելու, եւ ջանանք միանալու եւ միացնելու մեր մեծ իշխանները եւ միւս կողմէն երկիրը լաւ կառավարենք զօրացնենք. բայց ո՛րմ կ'ըսես. մեր տղաքը խօսք չեն հասկնար. «Լաւ՝ կ'ըսես, մայրիկ, դու շատ խելօք կը մտածես», կը զրուցեն,— դարձեալ խելքերնին մտքերնին իրենց կրից, իրենց զուարճութեանցն է. եւ իմ խորհուրդներես տասնին, քսանին մէկն ի գործ չի դրուիր:

— Ճշմարիտ է, Տիկին, բոլոր ըսածներդ, եւ Բագարատ իշխանը իւր բոլոր մեծամտութեամբ խոստովանեցաւ թէ՛ «Իմ գլխուս այս փորձանքը չէր գալ եթէ երկու հոգուոյ խորհուրդ մտիկ ընէի, աստուած երկու խելք միայն ստեղծէր Էր Զայաստանի մէջ, եւ ան խելքերու մէկը կը նկան մը գլուխը լեցուցեր էր, միւսը լեռնցի շինականի մը»:

— Ո՛վ է եղեր այդ լեռնցին,— հարցուց Տիկինը սուր աչքերը փայլեցնելով:

— Սասունցի Յովնան մը:

— Յովնանը՝

— Դու Յովնան ուստի՞ կը ճանչես, Տիկին, ես ամենեւին չէի քսեր այդ անծանօթ անունը:

— Ինչպէ՛ս չեմ ճանչեր: Ահա մեր մեծամեծ իշխանաց հազար մէկ յիմարութեանց առաջիկներէն մէկն էի կ'արհամարհէն, ոչինչ կը համարին իրենցմէ շատ վար գտնուած ժողովրդեան մարդը, նորա խելքէն, քաջութենէն, կարողութիւններէն օգուտ քաղել ամենեւին չգիտէն: Զազար անգամ ըսեր եմ եղբարցս Էլ, զաւկներուս էի որ օրինակ պետք է առնուլ նոյնիսկ արաքներէն, նոյնիսկ յոյներէն, որ